

**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ**

*Ընդունելության թեստը բաղկացած է 10 առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր (ընդամենը՝ 50 միավոր):*

*Երկրորդ, իններորդ առաջադրանքներում յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 0.2 միավոր, առաջին, երրորդ, վեցերորդ, յոթերորդ, առաջադրանքներում՝ 0.5 միավոր, չորրորդ, հինգերորդ, ութերորդ և տասներորդ առաջադրանքներում՝ 1 միավոր:*

*Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:*

*Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 60 րոպե:*

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Լրացնել տեքստում բաց թողած տառերը.**

Լենկթեմուրը ներխուժել էր Հայաստան: Բա\_\_բերները նրան հայտնեցին, որ մոտակայքում մի ու\_\_տատեղի կա, որտեղ գտնվում է հայոց յոթ ու\_\_տաբեռանոց ադամանդը: Կաղ զավ\_\_իչի ախորժակը գ\_\_գովեց. նա արշավեց դեպի սր\_\_ավայրը: Բայց հենց մոտեցան վանքին, Լենկթեմուրի զինվորներն սկսեցին ցավերի մեջ զալարվել ու մեռնել: Բռնակալը հասկացավ, որ այն գերբնական գ\_\_րություն ունի: Առանց հա\_\_շտակելու որև\_\_քան նա հա\_\_շտապ հեռացավ:

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Ընդգծել այն բառերը, որոնք գրվում են մեծատառով.**

ա/ ԲՈԼՈՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ՄԻՐՈՒՄ ԵՆ ՄԵԾ ԳՐՈՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ՝ «ՉԱԽՉԱԽ ԹԱԳԱՎՈՐ», «ՔԱԶ ՆԱԶԱՐԸ» ԵՎ ԱՅԼՆ:

բ/ ՓԱՅՏԱԿԱՐԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ ՆԱՀԱՆԳՆ ԷՐ ԿՈՒՐ ԵՎ ԵՐԱՍԽ ԳԵՏԵՐԻ ՍՏՈՐԻՆ ՀՈՍԱՆՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ:

գ/ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ԻՄԱՍՏԱՍԵՐ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻՆ ԾՆՎԵԼ Է ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ, ԱՇԱԿԵՐՏԵԼ Է ԿԱՐԿԱՌՈՒՆ ԳԻՏՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑՈՒՆ:

դ/ ՀԻՆԱՎՈՒՐՑ ՀԻՇԱՏԱԿՆԵՐՈՎ ՀԱՅՏՆԻ ԱՂԹԱՄԱՐ ԿՂԶԻՆ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ՎԱՆԱ ԼՃԻ ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ, ՆՐԱ ԴԻՄԱՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐՎՈՍ ԼԵՌՆԱՇՂԹԱՅԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԿԱՊՈՒՏԿՈՂ ԼԵՌՆ Է:

ե/ ԳՐԻԳՈՐ ՁՈՀՐԱՊԸ ԿԱՆԳ ԱՌԱՎ ԳՐԱՍԵՂԱՆԻ ՄՈՏ ԵՎ ՀԱՅԱՑՔՆ ՈՒՂՂԵՑ ԷՂԳԱՐ ՇԱՀԻՆԻ «ՓԱՐԻՉՈՒՀԻՆ ԿԱՌՔՈՒՄ» ՆԿԱՐԻՆ ԵՎ ՍԿՍԵՑ ԽՈՐՀԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԱՍԻՆ:

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3.** Սյունակներից առանձնացնել և կողք կողքի գրել հոմանիշ բառերը (հոմանիշների եռյակ).

1. պաշտել
2. թևավորել
3. պղծել
4. ծփալ
5. կարեկցել

1. ապականել
2. ալեկոծվել
3. երկրպագել
4. ցավակցել
5. գոտեպնդել

1. ոգեշնչել
2. մեծարել
3. վշտակցել
4. արատավորել
5. ծածանվել

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4.** *Կազմել տրված գոյականների հոգնակի թիվը.*

*ոտնաձայն* \_\_\_\_\_

*հեռագիր* \_\_\_\_\_

*սլատմագիր* \_\_\_\_\_

*հրացան* \_\_\_\_\_

*կին* \_\_\_\_\_

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5.** Ընդգծել ածականի գերադրական աստիճանի օրինակները.

թեթևագույն, ծոցագույն, վարդագույն, առավելագույն, մոխրագույն, ազնվագույն, ժանգագույն, հազարագույն, լավագույն, գերագույն:

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6.** Սյունակներում առանձնացնել որակական և հարաբերական ածականները. արևելյան, ջանասեր, բարձր, լեռնային, մարդկային, գեղեցիկ, լուսեղեն, օդային, հմուտ, կույր:

ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ	ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7.** Առանձնացնել և սյունակներում գրել.

Արագ, այդ, հիմա, նույնպես, դանդաղ, միշտ, ամենուր, սույն, իրար, այսպես:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ	ՄԱԿԲԱՅՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Տրված թվականները գրել բառերով.

910 \_\_\_\_\_

1899 \_\_\_\_\_

1600005 \_\_\_\_\_

XXVIII \_\_\_\_\_

61-րդ \_\_\_\_\_

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Որոշել տրված բայերի *եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը, սեռը.*

Բերել եմ \_\_\_\_\_

Գնային \_\_\_\_\_

Կկարդան \_\_\_\_\_

Պիտի հպարտանանք \_\_\_\_\_

Նայե՛ք \_\_\_\_\_

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Կազմել նախադասություն՝ չխախտելով տրված բառերի հերթականությունը.

ա/ Մութ, գիշեր, խորհրդավոր, լռություն, խախտել, միայն, եղեգներ, խշշոց:

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

բ/ Աննա, անհանգիստ, սիրտ, թալրտալ, անորոշ, հուզմունք, ու, երջանկություն:

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

գ/ Հանկարծ, անձանթ, գեղեցկուհի, հայացք, պատահմամբ, հանդիպել, Հունանյան, հայացքին:

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

դ/ Գյուղ, աղբյուր, մոտ, թխկի, տակ, միայնակ, կանգնել, Մարան:

---

---

Ե/ Մասիս, գագաթ, փայլփիլե, ոսկեվառ, շող, որոնք, աչք, շլացնել:

---

---